

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
NATIONAL STATISTICAL SERVICE OF
THE REPUBLIC OF ARMENIA

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԻԿ
2017**

Women and Men in Armenia

*Վիճակագրական գրքույկ
Statistical Booklet*

ԵՐԵՎԱՆ - 2017 - YEREVAN

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «**վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող**», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «**մեկտեղումը**», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների արձագանքները և առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները, խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին:

In present day world which is characterized by the information variety and intensity of informational flows, the possible “**combination**” of three participants of official statistics such as respondents, users and taxpayers, “**occupying the angels of statistical triangle**” having different dispositions, is of great importance, especially from viewpoint of perception requirements “**communication skills leveling**” by national and international levels.

The National Statistical Service of RA (NSS RA) would like to thank all the respondents who have supplied information for this statistical publication and from the above mentioned considerations welcomes any comments and suggestions from the respondents and taxpayers, as statistical users, for the future developments of statistical publication.

You are kindly asked to provide your comments and suggestions to the Public relations and statistical information dissemination division of NSS RA concerning the future development of the publications.

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3
Address: 3 Government House, Yerevan, 0010, Republic of Armenia



Ֆաքս

Էլեկտրոնային փոստ

(+ 374 11) 52-33-56

(+ 374 11) 52-19-21

info@armstat.am



Fax

E-mail

ՀՀ ԱՎԾ կայքեր

հայելային կայք

<http://www.armstat.am>

<http://www.armstat.info>

<http://www.armstatbank.am>

<http://www.armdevinfo.am>

URL

Mirror website

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2017

© NATIONAL STATISTICAL SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA, 2017



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
C O N T E N T

1. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	13
<i>DEMOGRAPHY</i>	
2. ՄԻԳՐԱՑԻԱ.....	27
<i>MIGRATION</i>	
3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	31
<i>HEALTH</i>	
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	42
<i>SOCIAL SECURITY AND SOCIAL PROTECTION</i>	
5. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ և ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	44
<i>EDUCATION AND SCIENCE</i>	
6. ԻՐԱՎԱԽԱՒՏՈՒՄՆԵՐ	54
<i>CRIME</i>	
7. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	56
<i>LABOUR RESOURCE</i>	
8. ՏՆՏԵՍԱՊԵՍ ՈՉ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	59
<i>POPULATION OUT OF LABOUR FORCE</i>	
9. ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱԿՏԻՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ (ԱՇԽԱՏՈՒԺ).....	64
<i>ECONOMICALLY ACTIVE POPULATION (LABOUR FORCE)</i>	
10. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	65
<i>EMPLOYMENT</i>	
11. ՈՉ ՖՈՐՄԱԼ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	73
<i>INFORMAL EMPLOYMENT</i>	
12. ԵՐԵԽԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔ	74
<i>CHILD WORK</i>	
13. ԱՇԽԱՏԱԺԱՄԵՐ	81
<i>WORKING HOURS</i>	
14. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	82
<i>EARNINGS</i>	

15. ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ.....	85
<i>UNEMPLOYMENT</i>	
16. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ.....	87
<i>HOUSEHOLDS AND LIVING CONDITIONS</i>	
17. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ.....	92
<i>GOVERNANCE AND INFLUENCE</i>	
18. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 2015-16, ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ.....	100
<i>2015-16 DEMOGRAPHIC AND HEALTH SURVEY KEY FINDINGS</i>	
19. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ 2014	125
<i>AGRICULTURAL CENSUS 2014</i>	



ՍԵՌԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

GENDER ISSUES

Սեռային բաշխմամբ վիճակագրությունը չափազանց կարևոր է պետության քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունների ու հավասար հնարավորությունների մոտեցումն արմատավորելու և երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավիճակն ըստ պատշաճի գնահատելու և արտացոլելու համար:

Վիճակագրությունը թույլ է տալիս վեր հանել կանանց և տղամարդկանց կարգավիճակի միջև առկա տարբերությունները, բարձրացնել հասարակության իրազեկվածությունը դրանց վերաբերյալ և պարբերաբար կատարել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ուսումնասիրություններ: Սեռային բաշխմամբ վիճակագրության կարևորությունը բարձրացվեց Պեկինում 1995 թվականին տեղի ունեցած կանանց հիմնահարցերով IY միջազգային համաժողովում՝ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրումն ու տարածումը որակելով որպես ծրագրավորման և գնահատման ռազմավարական նպատակներ:

Համաժողովի քննարկումները շեշտադրեցին կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների խնդիրները և դրանց լուծման համար հնարավոր գործողությունների ծրագիրը, մասնավորապես կրթական տեղեկատվության ոլորտում: Սահմանվեցին հետևյալ ընթացակարգերը վիճակագրական տվյալների հավաքագրման և հրապարակման համար

-համաձայն 206 (ա) կետի, ազգային, տարածաշրջանային և միջազգային վիճակագրական ծառայությունները, ինչպես նաև դրանց հետ կապի մեջ գտնվող կառավարական մասնագիտացված գործակալությունները, իրենց իրավասության սահմաններում, համագործակցելով գիտահետազոտական հաստատությունների հետ, ՄԱԿ-ին պետք է ապահովեն անձանց վերաբերյալ սեռատարիքային վիճակագրական

Gender statistics plays a key role in mainstreaming gender into policies of the state and serves as a tool to adequately assess and reflect the situation of women and men in economic, social and political spheres of the society. Gender statistics allows increasing public awareness about the status of women in relation to that of men and conducting systematic study of gender issues. “The importance of gender statistics was strengthened at the Fourth World Conference on Women, referred to as Beijing 1995 in setting the generation and dissemination of gender-disaggregated data as strategic objectives for planning and evaluation”. Discussions at the Conference focused on gender problems and possible action plan for their remedy, particularly in the field of educational information. The following procedures for collecting/presenting statistical data have been defined:

-according to Article 206 (a), national, regional, and international statistical agencies, as well as specialized government agencies cooperating with the scientific research institutions will provide the UN with the collection, processing, analysis, and presentation of information on age/sex composition of population, expressing the interrelationship and problems of women and men in the different sectors of society.

տվյալների հավաքագրումով, մշակումով, վերլուծությամբ ու ներկայացմամբ՝ արտացոլելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունն ու հիմնահարցերը, -համաձայն 207(ա) կետի, պետությունները պետք է ապահովեն կանանց և տղամարդկանց վերաբերյալ վիճակագրական տվյալների հրապարակումների մատչելիությունը (հասկանալի, ընկալելի լինեն հասարակության լայն շրջաններին):

2000 թվականին ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) կողմից կազմակերպված «Պեկին+5»-ի նախապատրաստական համաժողովին ներկայացվեցին կանանց հիմնահարցերով IY միջազգային համաժողովին ընդունված բանաձևերի կիրառման մշտադիտարկման (մոնիթորինգի) արդյունքները: Բացահայտվեց զարգացող երկրների համար ընդհանուր մի միտում, ըստ որի, առկա սեռային անհավասարությունը խաթարում է տնտեսական զարգացումն ու բացասաբար անդրադառնում աղքատության հաղթահարման միջոցառումների իրականացման վրա:

Սեռային անհավասարությունն ակնհայտ է ցածր եկամուտ ունեցող պետություններում և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում: Քաղաքական որոշումների կայացման ոլորտում ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանի պետությունները բնորոշվում են հետևյալ ընդհանրություններով.

- կանանց մասնակցության գրեթե բացակայությունը.
- թերզարգացած քաղաքացիական հասարակությունը.
- անկայուն և թույլ տնտեսությունը և աշխատուժի շուկան.
- վատթարացող սոցիալական իրավիճակը.
- կանանց նկատմամբ բռնությունը և առևտուրը.
- միջէթնիկական հարաբերությունների լարվածությունը.
- զինված հակամարտությունները և այլն:

-according to the Article 207 (a), states (countries) should provide clear statistical publications on women and men.

In 2000, during the preparatory meetings of “Beijing+5” Conference organized by the United Nations Economic Commission for Europe (UNECE), the monitoring of the implementation process formulas, adopted during the Fourth World Beijing Conference, was presented. A general trend has been identified for developing countries where the existing gender inequality delays the economic growth and produces negative impact on the poverty reduction activities. Gender inequality is strongly evident in low income countries and very poor households. In addition, it was mentioned that in the field of political decision-making, all the countries of the UNECE region share the following common features:

- Limited women’s participation;
- Weakly developed civil society;
- Unstable and weak economy and labor market;
- Downward-leaning social situation;
- Violence against women and trafficking;
- Inter-ethnic tension;
- Armed conflict

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Ստորև նշված կետերը ներկայացնում են կանանց իրավունքների պաշտպանության և կանանց ու տղամարդկանց համար հավասար հնարավորություններ ապահովող ազգային և միջազգային գործիքները.

- Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան,
- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների հավասարությունն ապահովելու և կանանց հնարավորություններն ընդլայնելու մասին Հազարամյակի զարգացման 3-րդ նպատակը,
- Պեկինի 4-րդ միջազգային համաժողովի հանձնարարականները,
- Աշխատանքի միջազգային կազմակերպության մի շարք դաշնագրեր, այդ թվում՝ հավասար արժեք ներկայացնող աշխատանքի համար տղամարդ և կին աշխատողների հավասար վարձատրման մասին 100-րդ դաշնագիրը,
- ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածը, որն ամրագրում է կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը,
- Կանանց իրավիճակը բարելավելու և հասարակությունում իրենց դերը բարձրացնելու մասին ՀՀ ազգային ծրագիրը, 2004-2010թթ.,

1998-2000 թվականներին Ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների շարքին են պատկանում ՀՀ օրենսդրության կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների հիմնահարցերի փորձագիտական գնահատումը, կանանց զբաղվածությունը բարձրացնելուն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը, բռնության և հանցավորության զոհ դարձած կանանց համար սոցիալ-հոգեբանական և այլ ծառայությունների բարելավումը, պետական կառավարման ոլորտում կանանց ներկայացվածության ավելացումը, ընտանիքի և տնային տնտեսության գլուխ հանդիսացող կանանց համար աջակցության մեխանիզմների ներդրումը և, ինչը կարևոր է, հասարակության սոցիալական և քաղաքական

[Հայաստանի կանայք և տղամարդիկ-2017-Women and Men in Armenia](#)

NATIONAL AND INTERNATIONAL INSTRUMENTS FOR PROMOTING EQUAL RIGHTS AND OPPORTUNITIES FOR WOMEN AND MEN

The following points outline the national and international instruments for protection of women’s rights and provision of equal opportunities for both women and men:

- UN Convention on the Elimination of All Forms of Discrimination Against Women; CEDAW Optional Protocol
- Goal 3 to promote gender equality and empower women of the Millennium Development Goals; by the mutual efforts of the RA Government, international organizations and civil society organizations
- Fourth World Conference on Beijing recommendations
- A number of ILO conventions, among them Convention 100 on Remuneration for Male and Female Workers for Work of Equal Value
- Article 30 of the RA Constitution, namely provision on equal rights for women and men
- The National Action Plan on Improving the Status of women in the Republic of Armenia and Enhancing their Role in the Society (NAP 2004-2010).

Among the measures contemplated under the NP 1998-2000 are gender expertise of the Republic of Armenia (RoA) legislation, elaboration and implementation of programs on increasing women’s employment, improvement of socio-psychological and other services for women who are victims of violence and crime, increasing the representation of women in the field of public administration, supporting mechanisms for women as family and household heads, and importantly, producing statistical data on the participation of women and men, in social and political life of the society – to name just a few.

կյանքում կանանց և տղամարդկանց մասնակցության վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացումը:

2003 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Եվրոպայի վերանայված սոցիալական խարտիան, որի նախաբանում ամրագրված է՝ առանց սեռային պատկանելիության հատկանիշով որևէ խտրականության սոցիալական իրավունքներից օգտվելը: ՀՀ կառավարության, միջազգային կազմակերպությունների և հասարակության լայն շրջանների համատեղ ջանքերով մշակվեց «Կայուն զարգացման ծրագիր» (ԿԶԾ), որտեղ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների քաղաքականության մշակման հիմնական բաղադրիչներից է:

2003 թվականին մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել նաև հանրապետությունում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների Ազգային ծրագիրը:

Ծրագիրը նպատակաուղղված է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի համաձայնագրի, պեկինյան IV Համաշխարհային համաժողովի հանձնարարականների, Եվրախորհրդի Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերի, ՄԱԿ-ի «Հազարամյակի զարգացման նպատակների հոչակագրի» պահանջների և ՀՀ միջազգային այլ փաստաթղթերով սահմանված պարտավորությունների կատարմանը:

Ծրագիրը նպաստելու է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովմանը, որպես ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն կառուցելու և քաղաքացիական հասարակություն կերտելու նախապայման:

In 2003, Republic of Armenia ratified the European Social Charter where enjoyment of social rights without discrimination on the ground of sex is a fundamental principle set forth in the preamble to the Charter. It addresses the issue of equality between women and men under two important angles, i.e. work and family. Also, the Poverty Reduction Strategy Paper (PRSP), in which equal rights and opportunities for men and women are emphasized, was elaborated by the mutual efforts of the RA Government, international organizations and civil society organizations.

In 2003 the National Action Plan (NAP) on Improving the Status of Women in the Republic of Armenia and Enhancing their Role in the Society 2004-2010, adopted by the RA Government, defines the principles, priorities, and key targets of the public policy that is pursued to address women's issues in the Republic of Armenia. NAP is based on the relevant provisions of the RA Constitution and is targeted Optional Protocol at the fulfillment of the UN Convention on the Elimination of All Forms of Violence against women, the recommendations of the Fourth Beijing Conference, the UN Millennium Declaration requirements, the documents of the Council of Europe Committee for the Equality of Rights of Women and Men, and commitments of the Republic of Armenia under other international instruments. The NAP aims at supporting equal rights and opportunities for women and men, as a prerequisite to shape a democratic, social, and legal state and a flourishing civil society.

Վիճակագրության մեջ կանայք և տղամարդիկ պետք է «տեսանելի» լինեն: Վիճակագրությունը պետք է արտահայտի կանանց և տղամարդկանց տեղն ու դերը հասարակությունում՝ հաշվի առնելով իրենց որպես սոցիալ-ժողովրդագրական առանձնահատուկ խմբերի, ինչպես նաև հասարակության մեջ կանանց և տղամարդկանց համար առկա տարբեր սոցիալ-տնտեսական իրողությունը: Այն նպատակ ունի չեզոք հիմքեր սահմանել սեռային հավասարության և կանանց հնարավորությունների ընդլայնման ճանապարհին համեմատություններ կատարելու և առաջընթացը գնահատելու համար: Սեռային բաշխմամբ վիճակագրությունը կարևոր գործիք և ուղեցույց է հանդիսանում կանանց և տղամարդկանց իրավահավասարությունների ու հավասար հնարավորության քաղաքականություն մշակողների և ոլորտի ակտիվիստների համար: Բացի այդ, ներկայացված տվյալները պետք է լինեն համապարփակ և դյուրընթեռնելի:

In the statistics, women and men have to be “visible”. Gender statistics are to express the place and role of women and men in society taking into account the characteristics of both women and men as social-demographic groups, as well as the different socio-economic realities women and men face in the society. Gender statistics aims at providing impartial basis for comparing and evaluating progress towards the set goal of gender equality and women empowerment. Gender statistics serve as an important tool and reference guide for gender advocates, policy makers, as well as activists in the field.

Besides, presented data should be comprehensible and user-friendly.



Սույն տեղեկատվությունը հիմնականում մշակված է ՀՀ ԱՎԾ տեղեկատվական բազաների տվյալների հիման վրա:

Սույն հրատարակության մեջ զետեղված աղյուսակներում և գծապատկերներում ներկայացված են կանանց և տղամարդկանց թվաքանակը բացարձակ թվերով և համամասնություններն ըստ որոշակի հատկանիշների: Համամասնություններն օգտագործվել են երկու եղանակով.

- կանայք և տղամարդիկ ըստ որոշակի բնութագրիչների,
- սեռային բաշխումն ըստ հատկանշային խմբերի:

Բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են մշտական բնակչության ցուցանիշների հիման վրա:

This information has been processed based on the statistics compiled by the NSS of RA.

The tables and graphs presented in this booklet present quantity of women and men in absolute numbers and proportions as per certain features. Proportions are used in two ways:

- women and men by particular characteristics,
- sex distribution by specified groups.

Population data are presented based on the indicators of resident population.



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ EXPLANATION OF SYMBOLS

-	Ուսումնասիրված երևույթի դեպքերը բացակայում են <i>No observation</i>
0	Մեծությունը փոքր է <i>Magnitude is less than half of unit</i>
...	Տվյալներն առկա չեն <i>Data are not available</i>
◊	Տվյալները ճշգրտված են <i>Data are adjusted</i>
Կ W	Կին <i>Women</i>
S M	Տղամարդ <i>Men</i>
Ա G	Աղջիկ <i>Girl</i>
S B	Տղա <i>Boy</i>
ՀՀ ԱՎԾ NSS RA	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն <i>National Statistic Service of RA</i>
S/S HH	Տնային տնտեսություն <i>Households</i>
ՀՀ ԿԲ CB RA	ՀՀ կենտրոնական բանկ <i>Central Bank of RA</i>
ՔԿԱԳ MRB	Քաղաքացիական կացության ակտերի գրանցում <i>Marriage Registration Bureaus</i>
ԱԸՀ LFS	Աշխատանքի ընտրանքային հետազոտություն <i>Labour Force Survey</i>
ՏՏԿԱՀ HHILCS	Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն <i>Households Integrated Living Conditions Survey</i>
ՄԱԿ UN	Միավորված ազգերի կազմակերպություն <i>United Nations</i>
ԿՉԾ SDP	Կայուն զարգացման ծրագիր <i>Sustainable Development Program</i>

ՍԽ GG	Սեռային խզվածք <i>Gender gap</i>
ԵԳ LT	Երկարատև գործազրկություն <i>Long-term unemployment</i>
ԵԳՄ LTU	Երկարատև գործազրկության մակարդակ <i>Long-term unemployment rate</i>
ԶԶԵ NEET	Չսովորող և չաշխատող երիտասարդներ <i>Youth not in Education and not in Employment</i>
ԿԶ NA	Կիրառելի չէ <i>Not available</i>

Առանձին դեպքերում բաղադրիչների *Insignificant discrepancies between the* գումարի և արդյունքի միջև աննշան *totals and sum in some cases can be* տարբերությունները բացատրվում են *explained by using rounded data.* տվյալների կլորացմամբ:



1. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բնակչությունը բնութագրվում է ժողովրդագրական ծերացումով և թվաքանակի նվազումով՝ պայմանավորված ծնելիության ցածր մակարդակով և բարձր արտագաղթով:

Ստորև ներկայացված բնակչության բուրգերը ցույց են տալիս սեռատարիքային կառուցվածքի փոփոխությունը վերջին տասնամյակում. **2007թ.** (առաջին գծապատկեր) և **2017թթ.** (երկրորդ գծապատկեր) միջակայքում ընդամենը բնակչության թվաքանակը 3 117 հազարից նվազել է 2 986 հազարի: Երկրորդ բուրգի վերին հատվածում ընդլայնվող «աղյուսները» ցույց են տալիս, թե ինչպես է տարեց մարդկանց՝ 75 և ավելի բարձր տարիքի, համամասնությունն աճում ընդհանուր բնակչության կազմում:

Հայաստանի բնակչության թվաքանակը նվազում է և գտնվում է ժողովրդագրական ծերացման շեմին:

1. DEMOGRAPHY


Armenia has an aging and declining population due to low fertility rates and high emigration.

*The population pyramids below show the change in age and sex structure over the last decade. Between **2007** (first graph) and **2017** (second graph) the total population declined from around 3 117 thousand to 2 986 thousand. The widening bars at the top of the pyramid on the second shows how the elderly, aged 75 and higher, are taking up an increasing proportion of the total population.*

Armenia's population is declining and ageing.

Մշտական բնակչությունը սեռատարիքային խմբերով, թվաքանակը՝ հազարներով
Resident Population by Age-specific Groups, Numbers in 1 000s

Գծապատկեր 1.1
 Graph 1.1



* Վերահաշվարկված է ՀՀ 2011թ.-ի մարդահամարի ցուցանիշների հիման վրա:
 Data are recalculated based on RA 2011 population census.

Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ
 Source: Demographic Statistics, NSS RA

Մշտական բնակչության թվաքանակն ու խտությունն ըստ ՀՀ մարզերի, ք.Երևանի
Permanent Population Numbers and Density by RA Marzes, c.Yerevan

Աղյուսակ 1.1
 Table 1.1


	Մշտական բնակչություն, մարդ Permanent population (person) 01.01.2017			Բնակչու- թյունը %-ով ընդամենի նկատմամբ Population in % of total	Տարածքը, քառ. կմ Area (km ²)	Բնակչության խտությունը, 1 քառ.կմ վրա Density (population per km ²)
	Կ/W	Տ/M	Ընդամենը Total			
Ք. Երևան C.Yerevan	578 682	497 159	1 075 841	36.0	223	4,824
Արագածոտն Aragatsotn	65 028	63 490	128 518	4.3	2 756	47
Արարատ Ararat	133 243	125 164	258 407	8.7	2 090	124
Արմավիր Armavir	136 264	129 495	265 759	8.9	1 242	214
Գեղարքունիք Gegharkunik	115 059	115 656	230 715	7.7	5 349	43
Լոռի Lory	119 133	101 965	221 098	7.4	3 799	58
Կոտայք Kotayk	131 351	121 479	252 830	8.5	2 086	121
Շիրակ Shirak	126 464	112 814	239 278	8.0	2 680	89
Սյունիք Syunik	71 095	67 858	138 953	4.6	4 506	31
Վայոց ձոր Vayots Dzor	25 972	24 305	50 277	1.7	2 308	22
Տավուշ Tavush	65 089	59 386	124 475	4.2	2 704	46
Քաղաք Urban	1 017 385	884 068	1 901 453	63.7		
Գյուղ Rural	549 995	534 703	1 084 698	36.3		
Ընդամենը Total	1 567 380	1 418 771	2 986 151	100	29 743	100

Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ
 Source: Demographic Statistics, NSS RA

Սեռերի հարաբերակցության գործակիցը *Sex Ratio*

Գծապատկեր 1.2
Graph 1.2

(տղամարդկանց թվաքանակը 100 կնոջ հաշվով, %)
(males per 100 females, %)



Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ
Source: Demographic Statistics, NSS RA

**ՀՀ մարզերի և ք.Երևանի բնակչությունն առանձին տարիքային խմբերով, 01.01.2017թ.
Population of RA Marzes and c.Yerevan by Specified Age Groups, as of 1 January, 2017**

Աղյուսակ 1.2
Table 1.2

Կ/Վ

Մարզեր	Տարիք, 1 000 մարդ / Age, 1 000 person				Երիտա- սարդները (15-29 տ.) ընդամենի նկատ- մամբ, % Youth (age 15-29) as % of total population	Ժողովրդա- գրական խնամառու- թյան գործա- կիցը, % Demo- graphic dependency, %	Marzes
	0-14	15-29	30-62	63+			
Ք. Երևան	97	112	272	98	34.1	50.9	C. Yerevan
Արագածոտն	12	15	29	9	4.6	47.4	Aragatsotn
Արարատ	25	30	61	17	9.1	46.2	Ararat
Արմավիր	25	31	63	17	9.5	44.0	Armavir
Գեղարքունիք	22	27	52	14	8.3	44.8	Gegharkunik
Լոռի	22	24	54	19	7.3	53.4	Lory
Կոտայք	25	28	61	17	8.5	47.3	Kotayk
Շիրակ	23	28	57	19	8.5	48.3	Shirak
Սյունիք	12	15	33	11	4.5	48.3	Syunik
Վայոց ձոր	4	6	12	4	1.7	48.3	Vayots Dzor
Տավուշ	12	13	29	11	3.9	54.9	Tavush
Քաղաք	176	199	478	164	60.5	50.2	Urban
Գյուղ	103	130	245	72	39.5	46.6	Rural
Ընդամենը	279	329	723	236	100	48.9	Total

Մարզեր	S/M				Երիտասարդները (15-29 տ.) ընդամենի նկատմամբ, % Youth (age 15-29) as % of total population	Ժողովրդագրական խնամառության գործակիցը, % Demographic dependency, %	Marzes
	0-14	15-29	30-62	63+			
Ք. Երևան	107	106	217	67	32.4	54.1	C.Yerevan
Արագածոտն	15	16	27	6	4.8	47.6	Aragatsotn
Արարատ	29	30	54	12	9.3	47.9	Ararat
Արմավիր	29	32	57	11	9.8	45.5	Armavir
Գեղարքունիք	26	29	51	10	8.9	45.9	Gegharkunik
Լոռի	24	24	42	12	7.2	54.3	Lory
Կոտայք	29	29	53	11	8.6	49.2	Kotayk
Շիրակ	27	27	48	11	8.4	49.9	Shirak
Սյունիք	13	15	32	8	4.7	45.8	Syunik
Վայոց Ձոր	5	6	10	3	1.8	47.4	Vayots Dzor
Տավուշ	13	13	26	7	4.1	51.6	Tavush
Քաղաք	197	191	386	110	58.6	53.2	Urban
Գյուղ	120	135	231	48	41.4	46.0	Rural
Ընդամենը	317	327	617	158	100	50.4	Total

Նշում. Ժողովրդագրական խնամառության գործակիցը հաշվարկվում է որպես երեխաների (0-14 տ.) և մեծահասակ (63 և բարձր տարիքի՝ որպես ՀՀ օրենքով սահմանված կենսաթոշակային տարիք) բնակչության թվաքանակների հանրագումարի հարաբերակցություն աշխատունակ բնակչության նկատմամբ (15-62տ.), տոկոսային արտահայտությամբ, որպես 100 աշխատունակ տարիքի բնակչության խնամքի տակ ընկնող կախյալների թվաքանակ:

Note: The demographic dependency ratio is the sum of children (age 0-14) and elderly populations (age 63 and above as 63 is the compulsory retirement age determined by the RA Law) to the working age population (age 15-62) and then multiplied by 100 a ratio of number of dependents as 100 people of working age.

Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ
Source: Demographic Statistics, NSS RA

ՀՀ-ում մարդիկ համեմատաբար ավելի երկար են ապրում, ամուսնանում են ավելի ուշ և քիչ երեխաներ ունենում:

People in RA live longer, marry later and have fewer children.

2016թ. կանանց **կյանքի սպասվող տևողությունը** ծննդյան պահից կազմել է 78.3 տարի, ինչը շատ ավելի երկար է, քան 1958թ.-ին, երբ կյանքի միջին տևողությունը կազմել էր 70 տարի, կամ 1970թ.-ին՝ երբ այն 75 տարի էր: Տղամարդկանց կյանքի սպասվող տևողությունը 2016թ.-ին կազմել է 71.6 տարի, 1958թ.-ի 67 և 1970թ.-ի՝ 70 տարվա համեմատ:

Life expectancy at birth has been improving, especially for women. Girls born in 2016 can expect to live until age 78.3, much longer than was the case in 1958 when the average life expectancy at birth was 70 years, or in 1970 when it was 75. In 2016 male life expectancy at birth is 71.6 years, compared to 67 years in 1958 and 70 years in 1970.

Առաջին ամուսնության միջին տարիքն աճել է թե տղամարդկանց և, թե կանանց համար: 2016թ.-ին կանանց առաջին ամուսնության միջին տարիքը կազմել է 26.4, իսկ տղամարդկանցը՝ 29.6: Սա զգալիորեն ավել է, քան 1996թ.-ին, երբ կանանց առաջին ամուսնության միջին տարիքը 22.1, իսկ տղամարդկանցը՝ 26.5 տարի էր:

Average age at first marriage has been increasing for both men and women. In 2016, on average women marry at age 26.4 and men - at age 29.6. This is significantly older than was the case in 1996, when women married on average at age 22.1 and men - at age 26.5.

Պտղաբերությունը կամ մեկ կնոջ հաշվով երեխաների միջին թվաքանակը, սկսած 1990թ.-ից սրընթաց նվազել է, հատկապես գյուղական վայրերում: 1990թ.-ին գյուղական վայրերում մեկ կինն իր ծնունակ տարիների ընթացքում ունենում էր միջին հաշվով 3.2 երեխա, քաղաքային վայրերի՝ 2.3 երեխայի համեմատ: Ցուցանիշների նվազման հետևանքով, եթե 2014թ.-ին գրեթե վերացել էր գյուղական ու քաղաքային ցուցանիշների միջև առկա տարբերությունը, ապա 2015-2016թթ.-ին գյուղական վայրերում գործակիցը կազմել է, համապատասխանաբար, 1.542/1.534՝ քաղաքային վայրերի 1.685/1.695 երեխայի համեմատ:

Fertility, or the average number of children per woman, has declined rapidly since 1990, particularly in rural areas. In 1990, rural women had an average of 3.2 children in their lifetime, compared to 2.3 children per urban woman. As a result of fallen rates, if in 2014 the gap between rural and urban has closed, in 2015-2016 the rate for rural areas has been 1.685 / 1.695 and 1.542 / 1.534 in urban areas.

Կանանց, ինչպես **առաջին ամուսնության միջին տարիքը**, այնպես էլ ամուսնության միջին տարիքն ընդհանուր առմամբ, ավելի բարձր է, քան մոր միջին տարիքն առաջին երեխայի ծննդյան և ծննդյան ժամանակ: Երևույթը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալները հաշվարկված են գրանցված ամուսնությունների հիման վրա, իսկ սովորաբար ամուսնությունների գրանցումներն իրականացվում են որոշակի հետաձգումով՝ երեխայի ծննդից հետո, ինչպես նաև առկա են դեպքեր՝ երկրորդ և այլ ամուսնությունների, որոնց գրանցումը կատարվում է ավելի բարձր տարիքում:

The average age of women at first marriage and the Age at marriage in general are higher than the average age of mother at the first childbirth and at childbirth in general. This reflects the fact that the estimates are based on the number of registered marriages, whereas registration of marriages usually occur with certain delay after the child is born, and there are cases of second and further marriages registered at later ages.

Հիմնական ժողովրդագրական ցուցանիշներ, 2016
Key Demographic Indicators 2016

Աղյուսակ 1.3
 Table 1.3

	Քաղաք <i>Urban</i>		Գյուղ <i>Rural</i>		Ընդամենը <i>Total</i>	
	Կ/W	S/M	Կ/W	S/M	Կ/W	S/M
Կյանքի սպասվող տևողությունը (տարի) <i>Life expectancy (years):</i>						
ծննդյան պահից <i>at birth</i>	78.4	71.7	78.1	71.3	78.3	71.6
15 տարեկանում <i>at age 15</i>	64.2	57.5	63.9	57.5	64.1	57.5
45 տարեկանում <i>at age 45</i>	34.9	29.4	34.7	29.2	34.8	29.4
65 տարեկանում <i>at age 65</i>	17.1	14.5	17.0	13.8	17.1	14.3
Առաջին ամուսնության միջին տարիքը (տարի) <i>Average age at first marriage (years)</i>	27.0	30.0	25.0	28.9	26.4	29.6
Պտղաբերության գործակից (1 կնոջ հաշվով) <i>Total Fertility rate</i>	1.695		1.534		1.647	
Առաջին անգամ մայրանալու միջին տարիքը (տարի) <i>Mean age of mother, at first child's birth (years)</i>	25.4		23.2		24.7	

Նշում. 2015-2016թթ., 8 749 տնային տնտեսություններում ՀՀ ԱՎԾ և ՀՀ առողջապահության նախարարության համատեղ իրականացված ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտության հիմնական ցուցանիշների զեկույցի համաձայն («ԱյՍԻԷՖ Ինտերնեյշնալ»/USAID 2017թ. սեպտեմբեր), Հայաստանում պտղաբերության գործակիցը հետազոտությանը նախորդող 3 տարիների կտրվածքով կազմել է 1.7:

Note. According to the key indicators of Demographic and Health Survey (DHS) implemented by NSS RA and Ministry of Health (MoH) of RA in 8 749 households in 2016-2017 (ICF Int./USAID in September 2017), the total fertility rate in Armenia, aver the 3 years prior to the survey, comprised 1.7.


Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն , ՀՀ ԱՎԾ
 Source: Demographic Statistics, NSS RA

Զգալիորեն նվազում է մեկ կնոջ հաշվով **ծնվող** երեխաների միջին թվաքանակը:

Average number of children per woman declines significantly.

**Պտղաբերության գործակիցը, 1990-2016թթ.
Fertility Rate 1990-2016**

Գծապատկեր 1.3
Graph 1.3




Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ
Source: Demographic Statistics, NSS RA

Բարելավվել է կյանքի սպասվող տևողությունը ծննդից, հատկապես կանանց համար:

Life expectancy has improved, especially for women.

**Կյանքի սպասվող տևողությունը, 1958–2016թթ.
Life Expectancy at Birth, 1958–2016**

Գծապատկեր 1.4
Graph 1.4



Նշում. 1958թ.-ին վերագրվում են 1958-1959թթ., 1968թ.-ին՝ 1968-1969թթ., 1978թ.-ին՝ 1978-1979թթ. և 1988թ.-ին՝ 1988-1989թթ.: Ներկայացված տվյալները կանոնավոր պարբերականությամբ չեն: 1991-2001թթ.-ի ցուցանիշները վերահաշվարկված են ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ճշգրտված բնակչության սեռատարիքային կառուցվածքի հիման վրա: 2002-2011թթ.-ի ցուցանիշները վերահաշվարկված են ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով ճշգրտված բնակչության սեռատարիքային կառուցվածքի հիման վրա:

Note: 1958 refers to 1958-1959, 1968 refers to 1968-1969, 1978 refers to 1978-1979 and 1988 refers to 1988-1989. Years shown are not in regular intervals. Indicators for 1991-2001 are recalculated on the base of revised age and sex structure of resident population by the results of RA Population Census, 2001. Indicators for 2002-2011 are recalculated on the base of revised age and sex structure of resident population by the results of RA Population Census, 2011.

Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն, ՀՀ ԱՎԾ
Source: Demographic Statistics, NSS RA

Որոշակի փոփոխություններ են արձանագրվել բնակչության ամուսնական կարգավիճակում՝ ըստ տարիքի և սեռի:

Տղամարդկանց և կանանց ամուսնական կարգավիճակներում առկա տարբերություններն ըստ տարիքի շատ չնչին են: Կանայք հակված են ամուսնանալ ավելի շուտ, քան տղամարդիկ: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ կանայք իրենց ծերության տարիներին, այդի մնալու ավելի մեծ հավանականություն ունեն, որը հիմնականում պայմանավորված է տղամարդկանց կյանքի համեմատաբար ավելի կարճ տևողության և կանանց ավելի երիտասարդ տարիքում ամուսնանալու հանգամանքով: Բացի այդ, կանայք ավելի հակված են ամուսնալուծված մնալ, քան տղամարդիկ, ինչը վկայում է այն մասին, որ ամուսնալուծությունից հետո նորից ամուսնանալու միտումը տղամարդկանց շրջանում ավելի բարձր է:

Some variations in marital status of population by age and sex occurred.

There is little difference between the marital status of men and women by age. Women tend to get married younger than men. The main difference is that women are more likely to be widowed in their old age, mainly due to the shorter life expectancy of men and women marry younger. Women are also more likely to have a marital status of divorced than men, which may point to a greater tendency among men to remarry following divorce.

**Ամուսնական կարգավիճակն ըստ տարիքային խմբերի, 2011թ.
Marital Status by Age-Specific Groups, 2011**

Աղյուսակ 1.4

Table 1.4

%


Ամուսնական վիճակը	Տարիքը Age						Marital status
	15-19		20-24		25-29		
	Կ/W	S/M	Կ/W	S/M	Կ/W	S/M	
Երբեք չամուսնացած	93.3	99.0	58.7	86.5	30.1	49.2	Never married
Ամուսնացած (գրանցված և առանց գրանցման)	6.4	1.0	40.0	13.3	66.6	50.2	Married (registered and without registration)
Բաժանված (գրանցված և առանց գրանցման)	0.2	0.0	1.1	0.2	2.8	0.5	Divorced / separated
Այրի	0.1	0.0	0.2	0.0	0.5	0.1	Widowed
Ընդամենը	100	100	100	100	100	100	Total
Ամուսնական վիճակը	Տարիքը Age						Marital status
	30-34		35-39		40-49		
	Կ/W	S/M	Կ/W	S/M	Կ/W	S/M	
Երբեք չամուսնացած	19.3	23.9	12.8	15.5	8.3	8.5	Never married
Ամուսնացած (գրանցված և առանց գրանցման)	74.6	74.8	77.9	82.3	78.6	88.4	Married (registered and without registration)
Բաժանված (գրանցված և առանց գրանցման)	4.8	1.1	6.4	1.9	6.3	2.3	Divorced / separated
Այրի	1.3	0.2	2.9	0.3	6.8	0.8	Widowed
Ընդամենը	100	100	100	100	100	100	Total
Ամուսնական վիճակը	Տարիքը Age						Marital status
	50-59		60-69		70 և բարձր		
	Կ/W	S/M	Կ/W	S/M	Կ/W	S/M	
Երբեք չամուսնացած	8.0	4.2	7.0	3.1	4.9	2.1	Never married
Ամուսնացած (գրանցված և առանց գրանցման)	71.6	91.7	56.3	89.1	31.7	72.0	Married (registered and without registration)
Բաժանված (գրանցված և առանց գրանցման)	5.4	1.8	3.8	1.5	1.8	1.0	Divorced / separated
Այրի	15.0	2.3	32.9	6.3	61.6	24.9	Widowed
Ընդամենը	100	100	100	100	100	100	Total

Աղբյուրը՝ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքները
Source: 2011 Population Census of RA

Տղամարդկանց և կանանց ամուսնական կարգավիճակն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2011

Marital Status of Men and Women by Sex and Age-Specific Groups, 2011

Գծապատկեր 1.5
Graph 1.5



¹ Ներառում է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) մարմիններում գրանցված ամուսնացածներին, առանց գրանցման համատեղ ապրողներին, առանձին ապրող ամուսիններին և միայն եկեղեցու կրոնական ծիսակարգով ամուսնացածներին:

Married includes those individuals living in legal marriage (with registration), those living in civil marriage (without registration) and married couples living separately.

² Ներառում է ՔԿԱԳ-ում գրանցված ամուսնալուծվածների և չգրանցված բաժանվածների թվաքանակները:
Divorced includes the number of divorced people registered in Marriage Registration Bureaus and de facto divorced people (without registration).

Աղբյուրը՝ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքները

Source: 2011 Population Census RA

Զգալիորեն ավելի շատ տղաներ են
ծնվում, քան աղջիկներ:

*Significantly, more boys are born than
girls.*

**Ծնվածներն ըստ սեռի, 1990-2016թթ.
Births by Sex, 1990-2016**

Աղյուսակ 1.5
Table 1.5

Տարի Year	Ա/Գ	Տ/Բ	Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից Sex ratio at birth
1990-1995	187 076	200 356	1.07
1996-2000	93 677	108 530	1.16
2001-2005	80 820	94 286	1.17
2006-2010	96 980	111 187	1.15
2011-2016	118 527	134 469	1.13

Նշում. Սեռերի հարաբերակցությունը ծննդյան պահից հաշվարկվում է ծնված տղաների և աղջիկների թվաքանակների հարաբերությամբ, որի կենսաբանորեն ձևավորված նորմալ միջակայքը՝ ծնված յուրաքանչյուր աղջկա հաշվով կազմում է 1.04-1.06 տղա:

Note: Sex ratio at birth is the number of males born divided by the number of females. Biologically the normal range is between 1.04-1.06 boys born for every girl.

Աղբյուրը՝ բնակչության վիճակագրություն , ՀՀ ԱՎԾ
Source: Demographic Statistics, NSS RA

2. ՄԻԳՐԱՑԻԱ MIGRATION

Օտարերկրացիների բաշխումն ըստ ստացած կացության կարգավիճակի տեսակի, տարիքային խմբերի և սեռի, 2016թ.

Distribution of Foreigners Gained RA Residency Status by Type, Sex and Age group, 2016

Աղյուսակ 2.1

Table 2.1

մարդ / person

S/M	Ընդամենը/Total	0-14	15-29	30-64	65+
Ընդամենը/Total	3 550	205	1 553	1 631	161
Հատուկ/ <i>Special</i>	398	0	170	167	61
Մշտական/ <i>Permanent</i>	704	124	202	343	35
Ժամանակավոր/ <i>Temporary</i>	2 448	81	1 181	1 121	65
Կ/W	Ընդամենը/Total	0-14	15-29	30-64	65+
Ընդամենը/Total	2 399	124	1 088	1 067	120
Հատուկ/ <i>Special</i>	205	0	62	109	34
Մշտական/ <i>Permanent</i>	625	58	187	342	38
Ժամանակավոր/ <i>Temporary</i>	1 569	66	839	616	48

Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն


Source: RA Police Adjunct body of The Government of RA

Կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների բաշխումն ըստ տարիքային խմբերի և սեռի, 2016թ.

Distribution of Foreigners Gained RA Residency by Sex and Age group, 2016

Գծապատկեր 2.1

Graph 2.1




Աղբյուրը՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն

Source: RA Police Adjunct body of The Government of RA

Ապաստան հայցող անձանց բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության երկրների, 2016թ.
Asylum Seekers Disaggregated by Sex, Age Group and Country of Citizenship, 2016

Գծապատկեր 2.2
 Graph 2.2



Աղբյուրը՝ ՀՀ միգրացիոն պետական ծառայություն
 Source: State Migration Service of RA

2016թ.-ին փախստականի կարգավիճակ շնորհված անձանց բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության երկրի
Distribution of Persons Granted Refugee Status in 2016 by Gender, Age Group and Country of Citizenship


Աղյուսակ 2.2
 Table 2.2

Կ/W					Քաղաքացիության երկիր/Country of citizenship	Տ/M				
0-17	18-34	35-64	65+	Ընդամենը/Total		0-17	18-34	35-64	65+	Ընդամենը/Total
5	2	5	-	12	Սիրիա/Syria	6	6	4	1	17
2		2	-	4	Ուկրաինա/Ukraine					-
	1	1	-	2	Այլ/Other					-
		1	-	1	Քաղաքացիություն չունեցող /Stateless		1			1
7	3	9	-	19	Ընդամենը/Total	6	7	4	1	18

Աղբյուրը՝ ՀՀ միգրացիոն պետական ծառայություն
 Source: State Migration Service of RA

2016թ.-ին փախստականի կարգավիճակ շնորհված անձանց բաշխումն ըստ սեռի, տարիքային խմբերի և քաղաքացիության երկրի
Distribution of Persons Granted Refugee Status in 2016 by Gender, Age Group and Country of Citizenship

Գծապատկեր 2.3
 Graph 2.3



Աղբյուրը՝ ՀՀ Միգրացիոն պետական ծառայություն
 Source: State Migration Service of RA

2016թ.-ին փախստականի կարգավիճակը դադարեցված անձանց բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի
Distribution of person whose refugee status had been ceased in 2016, by sex and age groups


Աղյուսակ 2.3
 Table 2.3

Կ/W					Քաղաքացիության երկիր/ Country of citizenship	S/M				
0-17	18-34	35-64	65+	Ընդամենը Total		0-17	18-34	35-64	65+	Ընդամենը Total
-	-	1	-	1	Իրաք /Iraq	-	2	1	-	3
3	3	1	-	7	Սիրիա/ Syria	-	3	3	-	6
-	3	5	2	10	Քաղ.չունեցող /Stateless	-	13	3	-	16
3	6	7	2	18	Ընդամենը /Total	-	18	7	-	25

Աղբյուրը՝ ՀՀ Միգրացիոն պետական ծառայություն
 Source: State Migration Service of RA

2016թ.-ին փախստականի կարգավիճակը դադարեցված անձանց բաշխումն ըստ սեռի և տարիքային խմբերի
Distribution of person whose refugee status had been ceased in 2016, by sex and age groups

Գծապատկեր 2.4
 Graph 2.4




Աղբյուրը՝ ՀՀ Միգրացիոն պետական ծառայություն
 Source: State Migration Service of RA


3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ HEALTH

Հիվանդացությունն ըստ տարիքային խմբերի, 2016թ. Diseases by Age-Specific Groups, 2016

Գծապատկեր 3.1
Graph 3.1



Գծապատկեր 3.2
Graph 3.2



Աղբյուրը՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Source: Ministry of Healthcare of RA

Հոգեկան խանգարումներով հիվանդացությունն առաջին անգամ հաստատված օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ, 2006 և 2016թթ.
Population Morbidity Caused by Mental Disorder Diagnosed for the First Time, 2006 and 2016

Աղյուսակ 3.1
Table 3.1

%, ըստ սեռի
%, by sex


	2006		2016		
	Կ / W	Տ / M	Կ / W	Տ / M	
Օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ	29	71	36	64	<i>Organic (including symptomatic) mental disorders</i>
Հոգեկան և վարքի խանգարումներ՝ կապված հոգեակտիվ նյութերի օգտագործման հետ	2	98	4	96	<i>Mental and behaviour disorders caused by using psychoactive drugs</i>
Շիզոֆրենիա, շիզոտիպիկ և զառանցանքային խանգարումներ	47	53	41	59	<i>Schizophrenia, schizophrenic and delusional disorders</i>
Տրամադրության խանգարումներ	46	54	51	49	<i>Spirits disorders</i>
Նյարդային, ստրեստով պայմանավորված և մարմնաձևային խանգարումներ	31	69	30	70	<i>Neurotic. Stress caused, bodily disorders</i>
